ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/248

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.05.2022թ. թիվ 26/26-1/9236-2022 գրությամբ «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի 13.05.2022թ. թիվ 32 գրության հիման վրա, 20.05.2022թ. թիվ 26/26-1/9236-2022 գրությամբ նախաձեռնել է «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/248 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.05.2022թ. թիվ 32 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «ԴՍԵԲ» հիմնարկի կարիքների համար իրականացված ԴՍԵԲ-ԳՀԾՁԲ-2022/14 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2022թ. թիվ 2 արձանագրությամբ «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընթացակարգի ընտրված մասնակից: 28.04.2022թ. «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստի ծանուցմամբ առաջարկվել է կնքել պայմանագիր: Սակայն, ընտրված մասնակից ճանաչված «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագրի կնքումից՝ ՀՀ գնումների մասին օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով չներկայացնելով որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչպես նաև իրենց կողմից ստորագրված պայմանագիրը (...)»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/248 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/248 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/248 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԴՍԵԲ-ԳՀԱՊՁԲ-2022/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 25-րդ և 27-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 28.04.2022թ. ծանուցել է «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչպես նաև ստորագրված պայմանագիրը և որոշում կայացրել միջոցներ ձեռնարկել «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

5.ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.05.2022թ. թիվ 26/26-1/9236-2022 գրությունը, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի 13.05.2022թ. թիվ 32 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:***

Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է

պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպես, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԴՍԵԲ-ԳՀԱՊՁԲ-2022/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 25-րդ և 27-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 28.04.2022թ. ծանուցել է «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչպես նաև ստորագրված պայմանագիրը և որոշում կայացրել միջոցներ ձեռնարկել «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն 28.04.2022թ. ծանուցել է Ընկերությանը ***<u>պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում, այսինքն՝ մինչև 13.05.2022թ. ներառյալ, ներկայացնել ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, այնուհետև՝ մինչև նշված ժամկետի լրանալը, այն է՝ 13.05.2022թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի ընթացքում արձանագրել է, որ «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագրի կնքումից՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով չներկայացնելով որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչպես նաև ստորագրված պայմանագիրը և որոշում կայացրել միջոցներ ձեռնարկել «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող***</u>***

մասնակիցների ցուցակում ներառելու համար, այսինքն՝ ըստ էության զրկել է Ընկերությանը պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Մինչդեռ՝ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը*** և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, ***որ Պատվիրատուն, 13.05.2022թ.՝ 10 աշխատանքային օրը լրացած չլինելու պայմաններում Ընկերությանը պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելով, խախտել է Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները,*** ուստի՝ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.05.2022թ. թիվ 26/26-1/9236-2022 գրությամբ «Էմ էտ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**